ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ֆիզիկա առարկայի ուսուցման ժամանակակից մոտեցումներ

Դպրոց՝ ՀԱՊՀ ԳՄ Ավագ դպրոց

Առարկա-ֆիզիկա

Ուսուցիչ՝ Գայանե Սուքիասյան Սարգսի

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2023

Բովանդակություն

Նախաբան----------3

Գլուխ առաջին: Ուսուցչի դերը կրթական գործընթացում----5

Գլուխ երկրորդ: Ուսուցման տարբերակված, Վերլուծական

և Համագործակցային մոտեցումները:----------7-

Եզրակացություն----------20

Օտագործված գրականության ցանկ----------22

Նախաբան

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Այն ինչ մի ժամանակ թվում էր հավերժական ու անփոփոխ, այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ՝ սխալ:

Ազգային տնտեսությունների դինամիկ զարգացումը, մրցակցության աճը, չորակավորված կամ նվազ որակավորված աշխատանքի ոլորտի կրճատումը, զբաղվածության ոլորտում խոր փոփոխությունները մասնագետների պատրաստման նոր պահանջներ են առաջադրում, ծնում մասնագիտական որակների մշտական բարձրացման և շարժունակության պահանջ:

Նոր ժամանակների առանձնահատկություններից մեկն այն է, որ իրականության բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են. մեր աչքի առաջ հնանում են գիտելիքները, տեխնիկան, աշխարհի մասին պատկերացումները, փոփոխվում են բարոյական նորմերն ու բարքերը: Մարդը բառացիորեն հայտնվել է տեղեկատվական հեղեղում, որի հորձանքներին դիմադրելը դարձել է կենսական խնդիր:

Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացված ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

2. Ուսուցչի դերը կրթական գործընթացում

Համաձայն հայտնի սահմանման՝ կրթությունը գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համակարգի ձեռքբերման, յուրացման և դրա հիմքի վրա գիտական աշխարհայացքի բարոյական, անձնային որակների ձևավորման, ստեղծագործական ընդունակությունների զարգացման գործընթաց է և արդյունք: Նեղ իմաստով՝ կրթությունը ֆորմալ գործընթաց է, որով հասարակությունը գիտակցաբար իր կուտակած գիտելիքները, ունակությունները, ավանդույթները և արժեքները փոխանցում է սերնդե սերունդ: Կարճ ասած՝ կրթության միջոցով

ապահովվում է մշակույթի շարունակականությունը, նրա վերարտադրությունը: Կապված հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների հետ, որոշվում է կրթությոն բովանդակությունը, նրա ուղղություններն ու նպատակները:

Պատմության բոլոր ժամանակներում կրթության դերը միշտ կարևորվել է ու արժեվորվել: Կրթական գործընթացի կենտրոնում եղել և մնում է ուսուցիչը: Կապված հասարակական զարգացումների հետ փոխվել է ուսուցչի դերակատարումը: Նախկինում ուսուցիչը ինֆորմացիայի միակ աղբյուրն էր ու նրա խոսքը անհերքելի էր, այն ընդունվում էր զուտ ճշմարտություն: Այսօր ուսուցիչն ինֆորմացիայի միակ աղբյուրը չէ: Համացանցը տրամադրում է ինֆորմացիայի մեծ հոսք, որտեղ պրպտող, հետաքրքրվող աշակերտը կարող է գտնել իրեն հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները: Փոխվում է ուսուցչի գործառույթը. նա դառնում է ինֆորմացիայի հոսքը ուղղորդող ու կարգավորող մասնագետ և հայտնվում է աշակերտների հետ նույն հարթության վրա: Ուսուցումը ուսուցչակենտրոնից դառնում է աշակերտակենտրոն: Դասի կենտրոնում աշակերտն է՝ իր հետաքրքրություններով, կարողություններով ու հմտություններով, ուսուցիչը դառնում է ուսումնական գործընթացի ուղղորդող, համակարգող և վերահսկող: Սակայն դա միայն երևույթի արտաքին կողմն է: Որպեսզի ուսուցիչը կարողանա իր դերը ստանձնել, նա պետք է լինի ավելի պատրաստված, ինֆորմացված, ճկուն, զինված մասնագիտական ու մանկավարժական գիտելիքներով: Շատ աննշան քայլն անգամ կարող է ստեղծել անվստահության մթնոլորտ, որի արդյունքում կկորցնենք ուսումնական պրոցեսի արդյունավետությունը և ընդհանրապես ուսումնական պրոցեսն որպես այդպիսին:

Փոխվել է քսանմեկերորդ դարի դասարանը. աշակերտներն ավելի ազատ են, անկաշկանդ, մտածողությունը բաց է, տեղեկատվական դաշտն՝ անսահման: Ուսուցիչն այսօր ավելի լուրջ խնդիրներ է լուծում իր աշխատանքում. մի կողմից նա հետազոտող, վերլուծող մասնագետ է, պատասխանատու ուսման որակի համար, մյուս կողմից նա աշակերտի հոգեբանական ու ճանաչողական հենարանն է, խորհրդատուն, նրա ուսումնական գործընթացի ուղղորդողն ու

խթանողը: Առարկայի դասավանդման համատեքստում նա դիտարկում է գիտելիքը տարբեր տեսանկյուններից, ապահովում է տեսականի ու գործնականի միասնությունը, նպաստում վերլուծական, տրամաբանական մտածողության զարգացմանը, ճկուն է, ունի արագ կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու ունակություններ, աքսիոմատիկ մտածողություն, ինքնուրույն է և նորարար:

Ուսուցչի աշխատանքը շարունանակական ու անընդհատ պրոցես է, որն ամեն օր պահանջում է զարգացում: Աշակերտի կամ դասարանի հոգեբանությունը ճանաչելը, յուրաքանչյուրի հետ իր լեզվով խոսելը, տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելը, աշակերտին առանձին կամ դասարանի համատեքստում տեսնելը դառնում են օրվա պահանջ: Երկընտրանքներն ու մարտահրավերները դասարանային կյանքում, սեփական փորձի գնահատումն ու վերլուծումը, դասարանային հետազոտության մեթոդների իմացությունը նոր պահանջներ են դնում ուսուցչի առջև՝ լինել լայնախոհ, ունենալ պատասխանատվության զգացում իր գործի հանդեպ, լինել նպատակասլաց, կարողանալ համագործակցել ուսուցչական համայնքի հետ, մի կողմից լինել պաշտպանական, բայց և նորարարական - ստեղծագործող, վերլուծող, հետազոտող մասնագետ:

Սեփական փորձի հետազոտությունը, դասարանն ավելի լավ հասկանալու ցանկությունը, այլ ուսուցիչների փորձի ուսումնասիրությունը՝ այն մարտահրավերներն են, որին ամեն ժամ ու րոպե պետք է պատրաստ լինի ուսուցիչը:

Ուսուցման պրոցեսում ուսուցչի ընդունած որոշումները կախված են իր առարկայի և մանկավարժական գիտելիքի, ինչպես նաև աշակերտների մասին նրա ունեցած պատկերացումների և ուսումնառության վերաբերյալ զանազան գաղափարների փոխազդեցությունից: Դասավանդման գործընթացի և ուսումնառության արդյունքների փոխներգործությունն ունի էական նշանակություն:

Առարկայի դասավանդումը և դպրոցում ձեռք բերած փորձը լրացնում են ուսումնառության վերաբերյալ ուսուցչի ունեցած գաղափարները և ուսումնական եղանակների կիրառումը, դրանք դարձնում տարբերակված, հաշվի առնելով

աշակերտների իմանալու, հասկանալու, հիշելու և խնդիրներ լուծելու անհատական բնույթը:

Հասարակական կյանքի փոփոխությունները, զարգացումն ու առաջընթացը թափանցում են մեր կյանք, դպրոց և դասարան, որտեղ աշակերտն է, մեր երկրի քաղաքացին ու զինվորը, որին վստահվելու է մեր երկրի կառավարումն, անվտանգությունն ու ապագան: Որակյալ կրթություն տալու և նրա մրցունակությունը աշխարհում պահպանելու համար դարձյալ ուսուցչի դերն է կարևորվում, որպես սրտացավ, բանիմաց, ստեղծագործ, լայնախոհ, նպատակասլաց, վերլուծող ու հետազոտող մասնագետի, նրան է վստահված այն աշակերտների վաղվա օրը, որոնք կերտելու են մեր պատմությունը և մեր երկրի ապագան:

Գլուխ երկրորդ: Ուսուցման տարբերակված, վերլուծական և համագործակցային մոտեցումները

Անհատների միջև տարբերություններն ազդում են նրանց ուսումնառության որակի վրա: Եթե դասը պլանավորվում է այնպես, որ հաշվի չի առնվում աշակերտների հոգեբանական, տրամաբանական, ուսումնառության ոճի տարբերությունները, հատուկ կարիքներ ունեցող աշակերտների խնդիրները, ուսումնառության պրոցեսում բարձր արդյունքներ ակնկալել բոլոր աշակերտների համար հնարավոր չէ:

Այն խմբերը, որտեղ սովորում են խառը ընդունակություններով աշակերտներ, դասի պլանավորումը պահանջում է յուրաքանչյուր աշակերտի համար տարբերակված մոտեցում, այնպես, որ յուրաքանչյուր աշակերտ հնարավորություն ստանա իրացնել իր ներուժը՝ ուսումնառության ընթացքում դրսևորած ուժեղ կողմերը և հետաքրքրությունները և դրանցից օգուտ քաղելու եղանակները: Տարբերակումը և գնահատումը խիստ փոխկապակցված գործընթացներ են. ձևավորող գնահատումից ստացած տեղեկատվությունը գործողությունների հիմք է հանդիսանում, այն օգնում է հասկանալու, թե ուսումնառության որ կետում է գտնվում աշակերտը տվյալ պահին և որոշելու նրա հետագա քայլերը:

Տարբերակումը ռազմավարությունների համակարգ է, որի նպատակն է համոզվել, որ յուրաքանչյուր աշակերտ դասից հեռանում է ուսումնառության մեջ մի քայլ ավել կատարած, գիտի ավելին, ավելի խորն է ընկալում և ուզում է ավելին սովորել: Սովորողների միջև տարբերությունները առաջանում են տարբեր պատճառներից:





Կապված տարբերակված ուսուցման կազմակերպման հետ առաջանում է դասի դասի պլանավորման մեջ նպատակներին հասնելու համար ռազմավարությունների սահմանում: Առաջանում է տարբերակված նպատակների համակարգ, առ այն, թե *ինչին* աշակերտները *պետք է*, *ինչին* հարկ է և *ինչին կարող են* հասնել.

- Բոլոր աշակերտները պետք է
- Աշակերտների մեծ մասը հարկ է, որ
- Որոշ աշակերտներ կարող են,

  որից էլ առաջանում է առանձին դասերի մակարդակում հիմնական, լրացուցիչ և օժանդակ նյութերի տարբերակում:

Տարբերակումը կարող է դիտարկվել բովանդակության, գործընթացի և արդյունքների համատեքստում:



Ռազմավարությունները կարող են կիրառվել առանձին, սակայն հաճախ օգտագործվում են փոխկապակցված ձևով: Տարբերակումը՝ որպես դասի պլանավորման մաս ներառում է դասարանում անհատների և խմբերի որոշակի կարիքները հոգալու համար ուսուցիչների կողմից ձեռնարկված մանրակրկիտ

քայլեր, հետևաբար դասապլանում միշտ պետք է հաշվի առնել անհատականացված, կրթական ծրագրեր ունեցող աշակերտների պահանջները: Ուսուցման տարբերակումը կարող է կազմակերպվել նաև դասարանից դուրս, դպրոցի մակարդակում <<խմբերի>> և <<հոսքերի>> բաժանելու տեսանկյունից: Հաշվի առնելով աշակերտների <<ընդհանուր ունակությունների>> գաղափարը՝ դպրոցներում կիրառվում է հոսքային ուսուցումը: 21-րդ դարում մերժված ուսուցման ձև է թե ֆինանսական, թե մարդկային ռեսուրսների անհավասարաչափ բաշխման առումով: Խմբերով աշխատող դպրոցների միակ տարբերությունը խմբերի ներսում նվաճումների և կարիքների զանազանությունն է: Որոշ մտածողներ կասկածներ ունեն խմբավորման արդյունավետության վերաբերյալ, որովհետև վերջինս թույլ է տալիս ուսուցիչներին ենթադրել, որ դասարանում աշակերտները աշխատում են միևնույն ձևով և միևնույն տեմպերով: Կիրառվում է այն դպրոցների փորձը, որտեղ աշակերտների խմբավորումը կատարվում է ըստ սեռի կամ ըստ ուսումնառության ոճի: Դպրոցներում տարբերակմանը արձագանքում են տարբեր եղանակներով:



Աշակերտական այնպիսի խմբերը, որտ[illegible] ունեն անհատական, [illegible], ու[illegible]ի տ[illegible]ման [illegible] խմբերում իրոք շատ բարդ է դասի պլանավորման գործընացը՝ դրան ապցվացավ այնպես, որ յուրաքանչյուր աշակերտ դասից հեռանա բավարարված, ավելին սովորած և ոչ մի աշակերտ իրեն չզգա անուշադրության մեջ: Տարբերակված ուսուցումը շատ հարմար է կիրառել ուսումնառության այն փուլում, երբ կառուցում ենք գիտելիքներ: Հայտորոշումից հետո պարզ է դառնում, թե յուրաքանչյուր աշակերտ գիտելիքների ինչ մակարդակ ունի տվյալ պահին, որոնք են նրա թույլ և ուժեղ կողմերը, ինչը չի հասկանում կամ լավ չի պատկերացնում, ըստ այդմ պլանավորվում է հետագա աշխատանքը: Տարբերակված ուսուցմանը օգնում են խմբային աշխատանքները:

Առաջադրանքները, որոնք մշակվում են խմբերի համար, ներառում են տարբեր բարդության հարցեր՝ հաշվի առնելով խմբում ընդգրկված աշակերտների առանձնահատկությունները, որպեսզի բոլորը խմբի ներսում հնարավորություն ունենան ինքնադրսևորման և հավասարաչափ մասնակցեն դասապրոցեսին: Բոլոր դեպքերում առաջադրանքների կազմման հիմքում պետք է լինի այն գաղափարը, որ բոլոր աշակերտները պետք է գրանցեն առաջընթաց. յուրաքանչյուր հաջորդ դաս նախորդի համեմատ պետք է փաստի առաջընթացի գոյությունը: Ձևավորող գնահատման օգնությամբ պետք է ոգևորել, խրախուսել աշակերտներին, ապահովելով դրական հետադարձ կապ:

Ես հակված եմ այն մոտեցմանը, որ ոչ միայն պետք է աշխատել ուսումնառության որակի լավացման ուղղությամբ, այլ նաև այնպես, որ հնարավորինս կրճատվեն այն տարբերությունները աշակերտների միջև, որոնք հնարավոր եմ համարում: Օրինակ՝ ուսումնառության ոճի տեսանկյունից՝ կարելի է խոսքային ոճի աշակերտների մոտ զարգացնել պատկերային մտածողությունը և ընդհակառակը, կամ ամբողջական մտածողության աշակերտների մոտ՝ վերլուծականը և ընդհակառակը: Ճիշտ կազմակերպված աշխատանքը կարող է ոճերի մեջ փոփոխություններ մտցնել և կրճատել տարբերությունները դրանց միջև:

Մեր ավագ դպրոցներում ընդունված է տարբերակումը կատարել ըստ աշակերտների նախասիրությունների: Մի կողմից դա ունի դրական արդյունք այն տեսակետից, որ հոսքերում ընդգրկված աշակերտներն ունեն միատեսակ հետաքրքրություններ, մասնագիտական առարկաներից նրանց ունեցած գիտելիքները շատ չեն տարբերվում միմյանցից, բայց մյուս կողմից՝ աշակերտը երեք տարի շարունակ փնտրտուքի մեջ է և չի կարողանում հասկանալ՝ ճիշտ կողմնորոշում ունի մասնագիտության ընտրության հարցում, թե՝ ոչ:

Ուսումնասիրությունները հիմնականում ցույց են տալիս, որ աշակերտների նախասիրությունների ձևավորման վրա մեծ ազդեցություն են ունենում հիմնական դպրոցի այն ուսուցիչները, որոնք ավելի բարեխիղճ են եղել իրենց աշխատանքում, սիրելով և նվիրվելով իրենց աշխատանքին, առարկայի

նկատմամբ սերը փոխանցել են իրենց աշակերտներին, որն էլ որոշիչ դեր է խաղացել նրանց մասնագիտության ընտրության հարցում:

Մեր դպրոցներում ուսուցչի աշխատանքը տարբերակման ուղղությամբ ընթանում է բարդ նաև այն պատճառով, որ ի տարբերություն Միացյալ Թագավորության, մեզ մոտ չկա << տարբերակում դասարանից դուրս >> մեխանիզմը, որը իր տարբեր մոտեցումներով օգնում է ուսուցչին տարբերակումն ավելի սահուն ու կազմակերպված պլանավորելու համար. թիրախավորումը՝ որպես ուսուցիչների, ծնողների և աշակերտների միջև խորհրդատվությունների անցկացման մեխանիզմ՝ ուսումնառության առաջընթացը կազմակերպելու նպատակով, մենթորությունը, որը բացահայտելով դասերից ետ մնացող աշակերտներին՝ օգնում է նրանց ուսումնառության կազմակերպման նպատակով, օժանդակությունը կրթակարգին, որը լրացուցիչ մարտահրավերներին պատրաստ աշակերտներին տալիս է ընդարձակման զանազան հնարավորություններ, կրթակարգի փոփոխությունները, որոնք կրթակարգը դարձնում են ավելի ճկուն՝ թույլ տալով դպրոցներին արձագանքել աշակերտների կարիքներին ու ձգտումներին:

Ցանկացած մասնագիտական ոլորտ, այդ թվում նաև դպրոցը, կարիք ունի բանիմաց, որակյալ, հմուտ և վերլուծող մասնագետների: Կապված հասարարական կյանքում տեղի ունեցող առաջընթացների հետ, անընդհատ փոփոխվում են հայացքները, պահանջները դպրոցից, որի նպատակը՝ բազմակողմանիորեն զարգացած, մասնագիտական կողմնորոշում ունեցող, արժեքային համակարգի պահանջներին բավարարող անհատի ձևավորումն է:

Ուսուցիչը լինելով հասարակության անդամ և միաժամանակ դասավանդող, պետք է իր վրա կրի հասարարկական կյանքի փոփոխությունները, հասկանա, որ այդ փոփոխությունները պահանջում են զարգացում, իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտություն է դառնում ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացումը, որն ուղղված է անհատի հատկանիշների, գիտելիքի, ըմբռնման և հմտությունների բարելավմանը:

Ուսուցչի աշխատանքը պետք է լինի ոչ թե ինքնանպատակ, սոսկ առօրեական պարտականությունների կատարում, այլ պետք է հիմնվի վերլուծական անդրադարձի վրա. նրան պետք է հուզեն կրթության նպատակներն ու հետևանքները, վերլուծող մասնագետը պետք է հասկանա, թե իր մոտ ի՞նչն է լավ ստացվում, ի՞նչն է աշխատում, կարողանա վերլուծելով և ամփոփելով իր տվյալ օրվա դասը, կառուցի հաջորդը, վեր հանելով նախորդ դասի թույլ կողմերը, բացթողումները, իր մոտեցումներն ու փորձը հարմարեցնի տվյալ դասարանային միջավայրին, միաժամանակ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի անհատական կարողություններն ու հնարավորությունները:



է հասնել միայն իր կողմից մշակված, վերլուծական ճանապարհով անցած և պրակտիկայում բազմիցս ստուգված գործողությունների ծրագրի օգնությամբ:
Իրականում կարևորվում են ընթերցանության նյութերի դերը ուսուցչի մասնագիտական զարգացման մեջ, այլոց փորձի ուսումնասիրությունը: Բայց ամենաարդյունավետը ըստ իս՝ ուսուցչի՝ իր սեփական փորձի հետազոտությունն է և զարգացումը:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը ուսուցիչների շրջանում և երկարատև պատմությունը, այն չի գտել լայն կիրառում: Դրա պատճառն ամենևին սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության վկայությունների բացակայությունը չէ: Իրականում, համագործակցային ուսուցումը ժամանակակիրց կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է: Կարճ ասած՝ գիտելիքների հասարակությունում անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման վերաբերող հետազոտությունների արձագանքները բավական խոստումնալից են:
Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: Համագործակցային ուսուցման կիրառումը սովորելը ժամանակատար գործընթաց է: Մեկ աշխատանքային հանդիպումը կամ սեմինարը դեռևս բավարար չէ: Ուսուցիչներից պահանջվում է մեկ կամ երկամյա մասնագիտական վերապատրաստում և ուսուցում: Այդ ժամանակահատվածում չափազանց կարևոր է դասարանում պարբերաբար կիրառել ուսուցման հնտությունները, ուսումնասիրել համագործակցային ուսուցման վերաբերյալ գրականություն, ինչպես նաև համագործակցել նմանատիպ գործընթացներում

ներգրավված ուսուցիչների հետ: Հայաստանի դպրոցներն ի տարբերություն այլ երկրների դպրոցների, ավելի շատ հիշեցնում են ուսուցիչների և սովորողների ավանդական համայնքներ: Ուստի համագործակցային ուսուցումը Հայաստանում ունի ներդրման ու զարգացման համար անհրաժեշտ հիմք և բարենպաստ պայմաններ: Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ, տարասեռ /հետերոգեն/ խմբեր են, որոնց անշխատանքը տևում է ողջ դասընթացի կամ ծրագրի շրջանաներում: Այս խմբերի անդամները աջակցում, օգնում և խրախուսում են՝ նպաստելով առաջադրանքի կատամանը և գիտելիքների ձեռքբերմանը: Այն ներառում է բացակա ընկերներին աջակցելը, անցած նյութը բացատրելը, տնային հանձնարարությունները կատերելու հարցում օգնելը և այլն: Դրանք մշտական են/ գործում են մեկից մի քանի տարի/ և ապահովում են երկարաժամկետ, հոգատար, գործընկերային փոխհարաբերություններ: Խմբերը անց են կացնում պաշտոնական հանդիպումներ՝ յուրաքանչյուր անդամի ակադեմիական առաջընթացը քննարկելու, միմյանց աջակցություն և օգնություն տրամադրելո համար, ինչպես նաև համոզվելու, որ յուրաքանչյուր անդամ կատարում է հանձնարարությունները և ունի բավարար առաջընթաց ակադեմիական ծրագրի շրջանակներում: Ոչ պաշտոնապես անդամները համագործակցում են ամեն օր՝ դասերի ընթացքում և դասամիջոցներին, քննակում են հաձնարարությունները և օգնում միմյաց՝ կատարել տնային աշխատանքները: Հենակետային խմբերն ունեն անձնական պատասխանատվություն՝ լսել և սատարել խմբի անդամին, երբ վերջինս ունի անձնական բնույթի խնդիրները: Որքան մեծ է դասարանը կամ դպրոցը և բարդ ու դժվարին առարկան, այնքան ավելի կարևոր է հենակետային խմբեր ունենալը: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում են հենց աշակերտների միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեքբերումը, այլև խմբային գործընթացի մշակման միջոցով հմուտ համագործակցողների /համագործակցային հմտություններ կիրառողներ/ և գիտելիքների ակտիվ կիրառողներ / մտածողության հմտություններ կիրառողներ/ ձևավորելը: Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև

սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը /ինքնաճանաչման և ինքնուղղորդման հմտությունների կիրառումը/: Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսումը և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ: Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ:

Համագործակցային ուսուցման կազմակերպման հիմնական սկզբունքները (Սպենսեր Կագանի համաձայն)՝

ա) Զուգահեռաբար տեղի ունեցող շփումներ՝ ուսման գործընթացում աշակերտների միջև տեղի են ունենում բազում շփումներ: Այսպիսով, յուրաքանչյուր անհատ աշակերտի ակտիվ մասնակցության տևողությունը շատ ավելի երկար է, քան այն կլիներ ավանդական եղանակով ուսուցման դեպքում:

բ) Անձնական պատասխանատվություն՝ աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ավարտի աշխատանքի իր բաժինը՝ խմբի աշխատանքում ներդրում կատարելու համար: Յուրաքանչյուր աշակերտ իր աշխատանքի մասին զեկուցում է խմբին: Դասընկերները գիտեն խմբում ներգրավված յուրաքանչյուր աշակերտի ներդրման մասին, և յուրաքանչյուր անձ պատասխանատու է առաջադրանքի կոնկրետ մասի համար:

գ) Կառուցողական փոխկախվածություն՝ անհատական զարգացումն ու խմբի զարգացումը դրականորեն փոխազդում են միմյանց, եթե աշակերտի զարգացման

համար պահանջվում է դասընկերների զարգացումը, և եթե խմբի հաջողությունը միաժամանակ նշանակում է նաև մեկ այլ խմբի հաջողություն։

դ) Հավասարաչափ մասնակցություն ՝աշակերտները մասնակցում են աշխատանքին ըստ իրենց ընդունակությունների։ Այս նպատակին հնարավոր է հասնել աշխատանքի բաշխման և առաջադրանքներ հանձնարարելու միջոցով։

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների[1] հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ։ Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն։ Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը։ Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին։
2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար։
3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը։
4. Սոցիալական հմտություններ. Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը։
5. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է։ Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը։

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ: Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է՝

1. խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
2. պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
3. բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,
4. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտագործվող նյութերը նախապատրաստելու համար:

Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր

Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում: Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ:

Համագործակցային ուսուցման մեթոդներ.Աշակերտների թիմային առաջադիմություն

---

1. Խճանկար
2. Շրջագայություն պատկերասրահում
3. Երեք բանալի և մեկ կողպեք
4. Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի

կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկար (Ջիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝

ելնելով դասի նպատակից և թեմայից։ Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք։

Եզրակացություն:

Աշակերտների անհատական տարբերություններին արձագանքելը ուսուցչական աշխատանքի ամենաբարդ ոլորտներից է: Ճիշտ կազմակերպված տարբերակումը հնարավորություն կտա ուսումնական պրոցեսի մեջ ներգրավել բոլոր աշակերտներին, նպաստել, որ նրանք այդ պրոցեսում ներդնեն իրենց ամբողջ ներուժն ու զարգացնեն իրենց կարողություններն ու հմտությունները՝ կրճատելով տարբերությունները միմյանց միջև: Լինելով հասարակության կարևոր օղակը, դպրոցը և ուսուցիչը չեն կարող գործել հասարակությունից դուրս և նրանից անկախ: Հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները արագ տեղափոխվում են դպրոց և իրենց և դրական, և բացասական ազդեցությունը թողնում կրթական գործընթացի վրա: Եվ ինչքան դժվար է իրոք նվիրված և պատասխանատու ուսուցչի աշխատանքը, երբ հասարակական կյանքի բացասական կողմերը խեղաթյուրում են երեխայի հոգեբանությունը, նրա աչքում արժեքազրկում գիտելիքի և ուսումնառության կարևորությունը: Հարաբերությունները, որտեղ ակնառու է անհանդուրժողականության մթնոլորտը, երեխայի մոտ ձևավորում են ագրեսիվություն, միմյանց չզիջելու, իրար նկատմամբ չարացած վերաբերմունք: Շատ դեպքերում երեխայի վարքի նման դրսևորումները գալիս են նաև ընտանիքից, որտեղ սոցիալական հարաբերությունները ընտանիքի անդամների միջև շատ բարդ են և խրթին: Դպրոցը պետք է հանդիսանա այն օղակը, որտեղ ձևավորված միջավայրը երեխայի մոտ զարգացնի սոցիալական հմտություններ, դրական արժեքներով արժեքային համակարգ, ինչու չէ նաև՝ լայնախոհություն, պատասխանատվություն, անձնվիրություն իրենց ուսման, ընկերների, ընտանիքի և հասարակության նկատմամբ:

Վերլուծական աշխատանքը չի կարող անկախ համարվել մասնագիտական գործունեությունից: Հիմնվելով վերլուծական աշխատանքի առանձնահատկությունների վրա՝ ուսուցիչները վստահաբար կբարձրացնեն

իրենց մասնագիտական կարողությունները շրջափուլային գործընացի սխեմային համապատասխան:

7. Գրականություն

1. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ:

2. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ:

3. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանա-կակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյան տապան» հրատ., 2005, 402 էջ: